



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ltn
1972

1999

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՄԲ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Եկ

ՀԱՐՍԱՎԻԹԻՒՆ ՄԸ



1625



Կ. ՊՈԼԻԱ

ՑՊԱԴՐՈՒԹԻՒՆ Յ. Դ. ԹՈԶԼԵԱՆՑ
)(1871)(

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՄԲ Ս.ՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ
ԵՒ

ՀԱՐՄՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Ամերիկայի Նիւ-Եօրք քաղաքին մէջ
երիտասարդ մը իւր սենեակը նստած ,
կըխորհէր թէ ի՞նչ գործի ձեռնազկէ ըս-
տակ շահելու համար : Իւր դէմը նըս-
տած էր Սամուէլ իր մտերիմ բարեկամը
ձեռքերը բանմալօնին գրանը խօժած
ոտքերը վեր երկնցուցած , և խորին մը-
տածմանց մէջ ընկղմած : Տասն րոպէի
չափ երկուքը այսպէս , լուսմեան մէջ
իրարու դիմոց նստելէն ետք Ժաք (երի-
տասարդը) յանկարծ տեղէն ցատկելով
աթոռը մեկդի նետեց , և սենեակին մէջ
երեք անգամ վեր վար գլորելով
մէյ՛ալ մէջ տեղի սեղանին վրայ ցատ-
կեց կայնեցաւ և , սկսաւ դիւահարի մը
նման գոյել “գտայ” , գտայ” , “Սամու-
էլ պաղարին Ամերիկայի մ'ըլլալով բը-
նաւ հոգը չըրաւ , այլ ձեռքերը աւե-
լի գրաններուն խորը խոյթեց :

41922-60

28. 1979

1981

1981

“Պատայ՝ կ’ըսեմ քեզի կ’աղաղակէլ
Փաք „, գտայ՝ Սամուէլ գտայ՝ :

— Է՛՞ գտածդ հօր եղբօրդ տու’ր , և
տե՛ս տեղը ի՞նչ կուտայ քեզի կ’ըսէլ Սա-
մուէլ . Փաք ծանր կերպարանք մ’առ-
նելով բարեկամոն քովն եկաւ :

— Այդպէս անարդական կերպով մի՛
խօսիր—ըստ անոր , զիտես որ ինձիպէս
մարդիկ այդպիսի ծաղրաբանութեան
վրայ բաւական ցաւ կզգան . կարօտու-
թիւնն է մայր հնարից ես ալ հնարք
մը գտայ , հնարկ մը՝ որով 400,000
դալերի տէր պիտի ըլլամ :

Գրին ու կաղամարն հօս բերէ՛ք ,
Սամուէլ հետեւէ իմ գաղաբարիս , և
պատրաստուէ Նիւ-Եօրք Հերալտ լը-
րագրոյն խմբագրապետին երթալ :

— Հ’ա , անշուշտ քաղաքական տըն-
տեսական կամ դրամական նիւթի մը
պիսայ յօդուած մը հրատարակել պիտի
տաք . — Ոչ ոչ այլ ծանուցում մը հրատա-
բակել պիտի տամ , լոէ որ ըսեմ քեզ ,
Աիրունդեմքով քաղցր բնաւորթեամբ :

ուսեալ և տաղանդաւոր , նաև 400,000
դալերի հարատութեան տէր եղող և
շատ ալ ճամարդութիւն ըրած երիտա-
սարդ մը կուղէ ինքզինքը վիճակահա-
նութեան դնել :

— Ի՞նչ . գոչեց Սամուէլ Փաքի խօս-
քը ընդմիջելով , ի՞նչ ինքզինքը վիճա-
կահանութեան դնել ,

— Այո՛ , այո՛ , քեզի անշուշտ դար-
մանալի կը թուի , — վիճակահանովթէտինը Ա. Յ.
դնել , Յունիսի առաջի օրը տոմանիւ-
րը պիտի քաշուին , տոմսակաց գինն է
30 դալեր , և կծախուին միայն նիւ-
եօք Հերալտի լրագրատունը : Է՛ այս
խորհուրդիս ինչ կըսէս Սամուէլ ըստ
Փաք :

— Եթէ յաջողիս շատ աղէկ , սա-
կայն ինծի կուգայ ուր չիպիտի կրնաս
8000 հազար տոմսակ ծախել , որ 400,
000 դալեռն ձեռք ձգես ,

— Կամ կողմանէս արդէն ամեն տա-
բակոյս յափթած եմ , խորհէ անդամ
մը այն բաղմաթիւ տարիքին առած օ-

բիւրդներուն, գեռահաս այրիներուն, վերջապէս ամեն կարդէ և աստիճանէ ամուսնանալ փափաքող օրիորդաց խումբ ըերտուն, և իրենց ազջլանցը համար այս պիսի անակնկալ պատեհութիւններու սպասող բազմաթիւ ծնողքներուն վրայ:

— Բայց եթէ 70 տարեկան պառաւ մը շահի գքեղ:

— Ատոր համար ալ խորհած եմ, Սամուէլ, ամբողջ գումարէն մաս մը վճարելով անշուշտ եմ որ կազատիմ, քանզի այնպիսիք անտարակոյս ստակի սիրոյն համար պիտի դրուին:

Այս նոր ու մեծ վարպետութեամբ կարդադրեալ գաղտօքարը երկուքին ալ սիրով դրաւեց, և երբ երկուքն ի միասին լրադրատունն մտան և խմբագրին իրենց ծանուցումն հաղորդեցին, անիւ կայ այնչափ վստահ էր բանին յաջող ւելուն որ, հրատարակութիւնը զատիթերթի մը վրայ ընել առաջարկեց: Անմիջապէս 8 հազար օրինակ տօմսակ տրամադրելով հետևեալ օրը Նիւ—Եօրքի բո-

լոր լրագիմներուն մէջ ասոր ծանումումը խոչըր զրերով հրատարակուած տեմնուեցաւ: Մարդուն մէկը երբ այս ծանուցումը կարդաց, անմիջապէս գեղավաճառի մը երթալով մկնդեղ գնեց իւր կեանքը վերջացնելու համար, սպասառաւ որ այս խորհուրդը առաջ ինք չէր ունեցէր, սակայն յետոյ իւր գիտաւորութիւնը փոխելով գնաց 500տոմսակ գնեց, խորհերով որ եթէ ինք շահի կրնալ 100.000 դաշեռի արժեքով աճուրդի հանել:

Փաք երբէք այսպիսի բանի մը հընարաւորութիւնը մոլքէն անցուցած չէր ուստի երբոր այս խորհուրդը իմացաւ շատ տրտմեցաւ:

Վերջապէս բանը քաղաքին չորս կողմը տարածուելով մեծ համբաւ ստացաւ, տոմսակներն իրենց կարծածէն աւելի շատ և քիչ ժամանակի մէջ ծախտեցաւ:

45 ծերացեալ օրիորդներ մէկտեղ գալով ընկերութիւն մը կազմելով 120

Էն ա հունակ դներ էին , որ եթէ
շահէին՝ ընկերութեամբ պիտի պահէին
զայն :

Ուրիշ 6 Ա.փրիկեցի սև կնիկներ ալ
ընկերութեամբ 3 տոմսակ դներ էին ,
Ժաք այս բաները լսելով սարսափով
լցուած սոսկալի խորհուրդներով կտան-
ջուէր և կտառապէր իր գլխուն դալիք
փորձութիւնը յայտ յանդիման տեսնե-
լով : Ամենէն ետք Նիւ-Եօրքի մէջ
հոչակատոր եղող կծծի կնիկ մը լրագ-
րատունը եկաւ տոմսակ առնելու , ա-
սիկայ 65 տարեկան պառաւ մ'էր , որ
400,000 դալեռ վաստկելու յոյսին փոր-
ձութեանը չկրնարով դիմանալ վերջա-
պէս այս մեծ ծախքը ընելու զիջաներ
էր :

— «Վնձի 6565 թիւը տուէք , ըստ
հին գուլպայի մը խորէն 50դալեռ դըժ-
կամակութեամբ հանելով , «ասիկայ է
իմ տարիքիս թիւը » յաւելցնելով իւր
սուր պառաւական ճայնովը : Ժաքի վը-
րայ պաղ քրտինք մը իջաւ , երբ այս

սարսափելի ցուցանքը տեսաւ , որոյ թոռու-
մած երեսները , առանց ակռայի ծնու-
ներն , կարմիր աշերն են իր Եղիպտա-
կան մոմեաներն կյիշեցնէին , որոնք քա-
նի մ'օր առաջ իւր բարեկամնենէն մե-
կուն տունը տեսեր էր : Միայն թէ ա-
նոնք անկենդան էին , իսկ ասի կենդա-
նի էր :

Սակայն ինքզինքը միսիթարելով “Երբ
այսպիսի ճիւտաղի ճեռքն իյնամ” , քիչ
ստակ վճարելով կրնամ աղատիլ ” կը-
աէր :

Յունիսի առջի օրունէ հինգ շաբաթ
առաջ , բոլոր տոմսակներն ծախուած
էին , բաց ի մէկէն , և 399,950 դալեռ
մնտուկին մէջ պատրաստ կեցած էր այն
բաղդաւոր մարդուն համար որ պիտի
շահէր : Ժաքի միտքը խորհուրդ մը ե-
կաւ յանկարծ , «Եկու սա վերջի տոմ-
սակն ալ ես առնեմ , գուցէ ես ինք-
զինքս շահիմ » , կըսէր , ինքնիրեն , և
շատ կցաւէր որ այսպիսի խորհուրդ մը
քանի մը շաբաթ առաջ չէր ունեցեր ,

ճիշտ երբ զրադանէն քսակը հանելու վը-
րայ էր , գեռահաս օրիորդ մէ սենեա-
կէն ներս մտնելով երեսները կարմրած
ամշնալով կհարցներ թէ տոմսակ կա՞յ
գրադիները ժպտելով Ժաքի առջին
գրուած տոմսակն իրարու ցուցնել սկսան,
վերջապէս մեջերնուն մէկը աղջկան դառ-
նալով ըստ թէ միայն մէկ տամսակ մը
մնացած էր , այն ալ պարոնը (Ժաք)
գնած է ,

Ժաք դեռ քսակը ձեռքն բռնած կայ-
նած էր , և նկատեց որ օրիորդն իրեն
դառնալով վրան նայեցաւ , այս ակրն-
թարթը թէե փոքր , սակայն բաւական
էր երկու սրտեր միմիանց հետ միաւորել :

Օրիորդն հաղիւ 18 տարեկան էր , և
ազնիւ կազմուածք մ'ուներ , ոքանչելի
մազերու խոպոպիքներ ուսն ի վար կը-
ծածանէին , երկնից կամարին նման կա-
պոյտ աչքեր , նուրբ և վարդագոյն շըր-
թունքներ , անոր հրեշտակային դէմք
մ'էին պարդեած :

Օրիորդին մէկ նայուածքն երիտա-

սարդին սիրտը բոլորովին գրաւեց :

— Օրիորդ եթէ կհաճիք , իմ տոմ-
սակս ձեղ տամ , ըստ Ժաք :

— Նատ չնորհակալութեամբ կնդու-
նիմ Պարոն-ըստ աղջիկը կամաց ձայ-
նով մը և ամաչելէն բոլորովին կարմր-
ուած էր , բայց - յաւելցուց - չեմ գի-
տեր թէ արդեօք այս Պարոններն իմ
առաջարկութիւնս կնդունի՞ն , այսինքն
ես միայն 40 դալիու ոնիմ-ըստ ինք-
զինքը բոլորովին կորմնցնելով . — սակայն
15 օրէն անպատճառ կհատուցանեմմիւս
10 դալեռը :

Զայս ըսելէն ետք աղերսական նայ-
ուածքով մը մէյ մը Ժաքի և մէյ մ'ալ
գրադիներուն երեսներն նայել սկսաւ :

— Օրիորդ վախնամ թէ այս Պարոն-
ներն չեն կրնար ընդունիլ , բայց մեծ
ուրախութեամբ ձեր պայմանն յանձն
կառնեմ , միայն թէ հիմայ ինծի ստո-
րագրութիւն մը տալուէք , ըստ Ժաք
այնպիսի ձայնով մը որ կյայտներ թէ
արդէն սիրոյ կրակը պրտին մէջ վառել

սկսեր էր :

Աղջիկը ուրախ , երախտադեմ , և պատկառական դէմքով մը դրեց թուղթը և տակը ստորադրեց , “Մարիամ Հալտէն , փողոց Ավինիու , թիւ 75 , յարկ երրորդ ” : Օրիորդն 40 դաշեռն վճարելով տոմսակն առաւ , եւ մեկնելու ատենն Փաք ձեռքն անոր երկնցուց որ մտերմաբար իւր նուրբ ձեռքը պատկառանօք բռնեց զայն , բոպէի մը չափ այսպէս ձեռք ձեռքի տուած լրիկ մընջիկ զիրար նկատելէն ետք , աղջիկը խոնարհութիւն մ'ընելով մեկնեցաւ :

Գրագիրները ապշած իրարու երես կնայէին , իսկ Ժաք սրտին խորունկէն հառաջանք մ'արձակելով , գլխարկն առաւ , և “մմաք բարով” ըսելով տանը ճամբան բռնեց : Մեծ անհոգութեան մէջ էր Ժաք . Սամուէլ , իւր մտերիմ բարեկամին ներկայութիւնն անդամ զայն կճանճրացներ , և իրեն սիրելի եղած զբոսանքը՝ Պիլարտի խաղը , բոլորվին երէսէ թողեր էր : Վիճակահանութեան

վրայ քանի որ կխորհեր , վրան պաղ քրտինք մը կիշնէր , և ոչ տեղ մ'ալ հանգիստ կգտներ : Վերջապէս գլխարկը առնելով նորէն փողոյը ելաւ , սկըսաւ շրջագայիլ , սակաւ իմն ափոփանք գտնելու համար :

Կամաց կամաց յառաջ երթալով Ավանիւ փողոցը հասաւ , և թիւ 75 տան սանդուխքէն վեր ենելով էրրորդ յարկին զանդակը զարկաւ , դուռը բացուելով աղջիկ մը տեսնուեցաւ :

— “Օրիորդ Հալտըն տունն է,, հարցուց Ժաք աղջկան .

— Այո , բայց կարծեմ իր մայրը քնացած է :

“Այդ իմ հոգո չէ . կամ լաւ ևս աղեկ է ” , ըսաւ Ժաք ինքնիրեն :

— Սա նամակը անոր տուէք—ըսաւ աղջկանը նամակ մը տալով :

— Տիկին Հալտըն խիստ տկար է . և շատ տրտմած կերեար—յաւելցուծ աղջիկը :

— Ի՞նչ . միթէ դրբաղտութիւն մը

պատահեցած հարցուց Ժաք :

— Ո՞չ, պարն, այլ միայն այս է իւր տրտութեան պատճառը. բժիշկ-ները կըսեն թէ թոքախտ ոնի եւ եթէ տաք երկիր մը չերթայ շուտով կմեռնի ասկէ զատ, պատուիրեցին միանդամայն որ լաւ կեանք ացնէ. աղէկ դինի խմե-լով կառքով պտտել երթալով բայց բայց . . . :

— Բայց ի՞նչ, հացուց Ժաք անհամ-բերութեամբ :

— Հալտընի ընտանիքը աղքատ է ը-սաւ աղջիկը կամաց մը և օրիորդ Հալ-տըն չկրնար որ և է օգնութիւն մը ընել իւր ընտանեացը, չեմ դիտեր թէ այսօր ուր գնաց և ինչ ըրաւ, քանզի առա-ւոտէ իվեր հոս չէր և երբ տուն եկաւ անկողնոյն վրայ իյնալով սկսաւ լաւ և ցարդ ալ կարծեմ կուլայ. չեմ դիտեր թէ Աստուած ինչու համար այսպիսի հրեշտակ մը կը չարչարէ :

— Նամակս ինձ տուէք ըսաւ Ժաք այնպիսի խրոխտ ձայնիւ մը որ, աղջիկը

սարսափեցաւ ետ տուաւ զայն առան-քառ մը ընելու, բայց երբոր Ժաք շըց տապաւ սանդուխէն վար իջնելով կը մեկնէր. բարբարոս մարդ ըսելով դու-ռը հրեց որ շառաջիւնով մը գոցու-եցաւ :

Սակայն Ժաք իւր ընելիքին վրայ կառ-կածել չտալու համար այսպէս կերպ մը գործածեր էր :

Գանդի անկեց մեկնելով ուղղակի այդի մը գնաց խելմը ծաղիկ աղեկ տե-սակ նարինջ և խաղող ծախու առնելով մեկու մը հետ Ավանիւ փողոցի 75 ըդ-տան երրորդ յարկն խրկեց. գինետունէ մալ ամենապատռական դինիէն քանի մը շիշ գնելով անոնք ալ հոն խրկեց հետերնին փոքրիկ տոմսակ մալ դրկելով որոյ վրայ գրած էր “Տիկին Հալտընի համար բարեկամէ մը,, :

Գիշ մը սփոփանք գտած ըլլալով իւր ձանձրոյթն փարատելու սիկառ մը ծը-խել արժան համարեց.

Ամբողջ երեք օրեր շարունակ տիկին

Հալտընի պտուղ , ծաղիկ , գինի , և այլն
խրկէլն ետք , նորէն հոն երթալ ու զ :
Սակայն այս անդամ՝ դռնապան աղջիկը
առաջի անդամուն պէս չըրաւ . և թէ-
պետք քիչ մ'աւելի հետաքըքրութեամբ
անոր երեսը նայեցաւ , բայց առանց
վերը լուս տալու թողուց որ վեր ելլէ :

Զարմանալի տեսարան մը աշացն առ-
ջե ներկայացաւ , բազմոցի մը վրայ տար-
ւօք կին մը պառկած էր . գունաթափ
և տկար , սակայն զուարդ գէմքով ,
իբրև արեգական ճառագայթ անձրւա-
բեր որոտում է մ'ետք :

Մարեամ ճերմակ հանդերձներ հա-
գած և սե թաւիշէ բաճկոնի մը վրա-
յէ ուր ոսկեթել մաղերն առատա-
պէս վար ձգուած , իր մօրը երբեմն
խաղողի ողկոյդ մը կ'տար , և մերթ-
ընդ մերթ անոր նիհար ձեռքերն կը շը-
փէր , մայն ալ ուրախութեամբ իւր աղ-
ջրկանը երեսը նայելն չըր կշտանար :
Այսէս էր տեսարանը երբ աղախինը
հիւրի մը գալստեան լուրը տուաւ . յայն-

Ժամ տեսարանը ակնթարիժ մը չըշերու
փոխուեցաւ . Մարեամ սարսափած եղ-
ջերուի մը նման ոտքի վրայ ելաւ , տի-
կինն ալ կը ջանար ոտք ելնել , երբ
Ժաք սենեակէն ներս կը մտնէր :

Մարեամի երեսներն կարմրիլ սկսան
երբ իւր պարտատէրն տեսաւ , իր բո-
ռը շարժման ձեւրէն որոշակի կը հաս-
կըցուէր որ ըսել կուզէր “ հոս մօրս առ-
ջին անոր վրայ մի՛ խօսիր :

Ժագ այս անխօս լեզուն անմիջապէս
հասկցաւ զի արգէն երկուքին մէջտե-
ղը լուիկ համաձայնութիւն մը կազմուած
էր , և այս պատճառաւ էր որ Ժաք հա-
մարձակեցաւ տիկինն Հալտընի հետ խօ-
սիլ :

— Խնդրեմ ներէք համարձակութեա-
նըս , տիկին , ձեզի այցելութիւն ընելու ,
քանզի երբ լսեցի թէ գուք իմ հօրս
բարեկամին տիկինը հիւանդ էք , չկըցայ
վայրկեան մ' ալ յապաղիլ հոս գալով
ձեր վիճակին վրայ անձամբ տեղեկութ-
իւն մը ստանալու համար , որպէսզի կա-

րենամ փոքր ինչ ծառայութիւն մ' ընել
ձեղ , — ըստ Ժա.ք :

— Նատ շնորհակալ եմ , պարոն՝ սա-
կայն ամուսինս երբէք ձեր վրայ բան
մ' ըստած չէ ինձ :

— Քանզի դպրոցէն ելնելնուն ետք
ալ ևս զիրար տեսած չըլլալը բնակա-
նաբար մոռցած ըլլալու է :

— Ձեր հայրը ո՞ր դպրոցը կերթար,
հարցուց տիկինը : Այս ծանր հարցում
մ' էր , սակայն նոյն միջոցին Ժաք իւր
աչքերը սենեակին չորս կողմն պտտյնե-
լով , բարեբաղդաբար կենդանագիրը մը
տեսաւ , որ ծովային պաշտօնակալի հա-
գուստն ունէր , և խորհելով ասի Մա-
րիամի հայրն կրնար ըլլալ , անմիջապէս
պատասխանեց . Պրուքինի ծովային դըպ-
րոցը գայած է տիկին :

— Այո՛ Նաւապետ Հալտըն ալ հոն
գայած է , — ըստ տիկինը :

— Երեք օրէ որ իմացայ թէ հոս կը
քնակիք , և . . . :

— Ուրեմն դուք էիք — ըստ Մարի-

ամ — որ իմ մօրս այս պատուական ըն-
ծաներն իրկեցիք , շատ շնորհակալ եմ
ձեղ , և բոլոր որտով երախտապարոտ :
Եւ ուրախութեամբ ծոցէն այն տոմսակը
հանեց , որոյ վրայ գրտած էր “ տիկին
Հալտընի համար բարեկամէ մը ” :

Ժա.ք կարմրեցաւ :

Այսպէս խօսակցելով երեքը ՚ի միա-
սին ատեն մը հին բարեկամներուն նման
տեսնուելին ետք , Ժա.ք ոտքի ելաւ և
նորէն տեսսակցութեան դալու թոյլտու-
թիւն իմսդընլով — որ տիկինն ալ սիրով
տուաւ — սենեակէն դուրս ելաւ մեկնե-
լու համար :

Մարիամ անմիջապէս դեղնեցաւ , և
կարծես թէ միտքը տհաճելի բան մ' ին-
կաւ , և դուրս ենելով մինչև սանդու-
խին գլուխը Ժաքին ընկերացաւ , չեմ
գիտեր պարոն թէ ի՞նչ խորհեցաք արդ-
եօք իմ վրաս , երբ զիս այն օրն զրա-
սենեակը տեսաք , ըստ մեղմ ձայն ով մը

— Ատոր վրայ ալ մի՛ խօսիք : Ըստ
Ժա.ք , որուն վրայ գրասենեակ ըառը :

տհաճելի ազդեութիւն մը կնէր , —
դուք միայն ձեր մօրը սիրոյն համար ը-
րիք այն բանը , ևանոր համար ես զձեզ
կը յարգեմ , և շատ կը սիրեմ : — զայս
ըսելով անոր ձեռքը բռնեց . Մարիամ
կը դողար . բայց իւր ձեռքը ետ չեր
քաշեր . Փաք անմեղ կերպով զայն դըր-
կեց , և իւր սրտին վրայ սեղմեց , որոնց
շրմունքները զիրար շոշափելով ուխտը
կնքուեցաւ , երկուքն ալ երջանիկ էին ,
և կուրախանային որ առջի տեսութեամբ
իրենց սէրը միացաւ :

Մէկ մ'ալ մօրը ձայնը լսուեցաւ որ
“ Մաեամ մարեամ ” , կը կանչէր . ուս-
տի երիտասարդը մեկնելով Մարեամ ալ
իւր մօրը քով դնաց :

Եւ սկսաւ դարձեալ վիճակահանու-
թեան վրայ խորհիլ . դժոխային կաքա-
սի նման 45 ծերացեալ օրիորդնը իր
խաղալ և 6 սև Ամերիկեցիները իր մար-
մինը տանջիլ կը թուէր իրեն : թիւ 65-
65 ի պաղ ձեռքերը կածես թէ իւր վր-
զին վրայ կզգար , որ իւր ստացուածքը

կուղեր ժառանգել . այս տիտուր և գա-
ռըն մտածմանց մէջ ընկված վերջապէս
տուն հասաւ , և Սամուէլին խորհուրդ-
կը հարցնէր :

— Ս.տոր ճարը չկայ — ըսաւ Սամու-
էլ , եփած ապուրդ պէտք է որ ուտես .
սակայն կարելի ալ է որ Մարեամ գքեզ
շահի , Փաք . զիտէ՞ որ դուն ես ախո-
յանը :

— Ս.սոտուած գիտէ ո՞չ , գոչեց Ժաք
տակն ու վրայ ըլլալով նորէն , բայց
զայն շահելու բնաւ յոյս չկայ , խորհէ-
մէկ անդամ , 79.99 թիւ մէկ հատիկ թիւ,
ոի մը դէմ :

— Ինչո՞ւ , — ըսաւ Սամուէլ , 7999
ամեն մեկուն համար նոյնն է :

— Իրաւ , ըսաւ Փաք , բայց իմ ու-
զածա ըլլալուն համար չելլար :

— Շատ հաւանական է ըսաւ Սամու-
էլ պաղ կերպով :

Համբերութիւն . այս էր մինակ խեղճ
Փաքի ընելքը . Մարեամի քով եղած
ատեն իւր ամեն վիշտերը կը մոռնար .

և յիրաւի անոր ներկայութեամբը հնարարաւոր էր իրեն մինչև խոկ Հաւատափննութեան բոլոր սոսկալի տանջանքներըն ուրախութեամբ տանել :


Այսհուան դատապարտուածի մը նման Ժա.ք բոլոր գիշերը աչքերը չեր կրնար գոցել . հաղար անդամ զզջաց ըրածին վրայ . բայց ալ ժամանակը անցած էր :

Յունիսի մէկն էր . յետևեալ օրը , առաւօտուն կանուխիէկ մը հազարաւոր մարդոյմէ բաղկացեալ խումբեր վիճակահանութիւնը գործադրուելիք տունը պաշարեր կեցեր էին . 800 տոմսակ առնող մարդը , 45 հողիէ բաղկացեալ ընկերութեան կողմէն երեսփոխանութիւն մը , 6 Ամերիկեցիներն . ՚ի մի բան այնպիսի խառնիճաղանճ բաղմութիւն մը , որ մինչև անդամ Նիւ-եօր.քի մէջ սակաւ տեսմուած էր :

Հուսկ յետոյ տօմսակները քաշուիլ սկսաւ . և թիերը կարդաւ կը կարդաց . ու էր ՚ի տեղեկութիւն հասարակութեան : 8000 ըորդ թիւը ամենէն առաջ ենելով

Ժաքի յոյսերն ալ ՚ի գերեւ ելաւ , Մարեամ կորմնցուց . Ժաքի սիրով տակն ու վրայ եղաւ , նորէն խորհուրդները խոռովուեցան , սոսկալի գաղափարներ իւրմիտը պաշարելով զայն կը տանջէին :

Բայց ինքզինքը ժողուելով ոռշադրութեամբ մտիկ կը և ճակատագրոյն վլճոյն կսպասէր : 800 տոմսակ առնողնալ հայհոյելով և անիծելով մեկնեցաւ :


Խոկ Ժաք սկսաւ քիչ մը Յունի առնել . քանզի աճուրդի գրուելու վախը գոնէ ՚իւուն ելու , նաև ա քառարուն և հինգը „ ողբալով և արտաածք հեռացան : Սրահին մէջ ամենուն դրուխը տաքնալ սկսաւ , շփոթութիւնն և աղմուկը սկսաւ կոմել վերջապէս շահող տոմսակը քաշուեցաւ , բոլոր բաղմութիւնը և ամենեն աւելի աք անհամբեր հետաքրքրութեամբ մտիկ կը նէին . մէյմալ որոտանման հնչեց „ թիւ 6565 „

— Իմ թիւս է , գոչեց պառաւ ճիվաղ մը , ո՞ւր է ո՞ւր է զանձս տուեք շուտով : Բոլոր բաղմութիւնը միաձայն

կը խնդար , իւրաքանչիւր ոք այլ և այլ
ծաղրաշարժ կատակներ և բարեմաղ-
թութիւններ կ'նէին Ժաքի և իր 65 տա-
րեկան դեռահասակ հարսին համար :

Իսկ Ժաք նոյն միջոցին ինքզինքը բո-
լորովին կորսունցուցած մեռելի մը նման
անդայ ամոռի մը վրայ ինկած էր :
պառաւը որ ըսես խենդի մը պէս բազ-
մութեան մէջ վաղելով Ժաքի քովն ե-
կած էր , և թեւերէն բռնելով քաշել
տահել կուզէր „ ոկուր գանձ իմ եկուր
քու գալերներովդ իմ տունս . ես շա-
հեցայ զքեզ ” կըսեր :

Մինչդեռ պառաւը այսպէս կուրա-
խանար , Ժաքն ալ անդին կամաց կա-
մաց սիմափելով երբ պառաւը տեսաւ
շատ բարկացաւ , “ կորավէ քովէս սա-
դայել ” կը պօռար . և յուսահատութենէն
ինչ ընկելիքը չուարած փախչել կը ջանար :

“ Բոնեցէք , բոնեցէք ” կաղաղակէր
պառաւը իւր սուր ձայնովը . „ պարոն-
ներուն կը բողոքեմ որ հոս նեկրայ են
մեծ թիւը ես չը շահեցայ :

“ Անշուշտ , անշուշտ ” գոչեղ բոլոր
բազմութիւնը . “ Ժաք պէտք է որ հետը
երթաք ” կը պոռաւին որ եներ :

Սարսափելի ծիծաղներ կրկնապատիկ
սաստկութեամբ քան զառաջինն , չորս
կողմէն նորէն լսուիլ սկսաւ սրահին մէջ :

Ուզելով չուզելով Ժաք վերջապէս
հնազանդեցաւ , և ուրախացաւ որ իր
տիրուհի հարսին հետ կառք մը նստելով
պիտի հեռանար անկեց :

Սամուէլն ալ միասին կառքը մտան
և բազմութան սարսափելի աղաղակնե-
րէն ողջունուելով արտօրնօք հեռացան
անկեց : Կառքին մէջ պառաւը իւր թա-
ռամեալ և կոշտ ձեռքերովը սկսաւ
Ժաքի վրան դրուիը որոնել ադահու-
թեամբ : Սակայն Ժաք ակնթարթի մը
մէջ կառքին պատուհանը խորտակելով
փախաւ , և իր սեննեակը աճապարեց
բայց ՚ի զուր քանզի հազիւ հաղ իւր սեն-
եակը մտէր էր , երբ նորէն պառաւին
պաղ և դողդոջուն ձեռքը իւր ձեռքին
կը դպչէր , այս անդամ իւր հետը եր-

կու ոստիկան ալ բերած էր “ Եկուբ
որդեակ , կաէր քաղցրութեամբ , զուր
տեղը ժաք , իւր հարստութեան կէսը
երեք քառորդը վերջապէս բոլորը տալ
կառաջարկէր անոր :

Ես իմ դանձս կուղեմ , քեզ պիտի
շոյեմ , պիտի սիրեմ ” կըսէր :

— Անհնար է պօռաց ժաք :

— Ապա թէ ոչ զքեզ ոստիկանու-
թեան կը յանձնեմ ըստ պառաւը :

Ուստի ոստիկանները ժաքը բռնելով
բանտը տարին :

Հոս ժաք պատեհութիւն ունեցաւ
իւր վիճակին վրայ լաւ մը խորհելու .
բայց որքան որ ալ խորհեցաւ , դարձ-
եալ ազատութեան ճամբայ մը չկրցաւ
գտնել : Զի դատաստանը անշուշտիրաւ-
ունքը պառաւին պիտի տար , և այն
ատեն ի՞նչ պիտի ըլլար իւր վիճակը :

Մինչդեռ ժաք այսպիսի դառն խոր-
հորդներու մէջ ընկղմած կեցած էր
տարւօք մարդ մը իւր խուցը մոտաւ.
Ես Հելլիկ փաստաբանն եմ , ըստ

Եթէ ինծի 50.000 դալեր տալ խօստա-
նաք զցեզ կընամ աղատել :

— Կընա՞ք պօռաց ժաք , անհնարին
ուրախութեամբ լցուած :

— Առանց առողջութեան ոչ վարձադ-
րութիւն „ ինչպէս որ կըսեն բժիշկները
բայց միայն թէ հետեւնիդ դաշինք մը
պիտի ընեմ . անպայման ինձ հնազմե-
գելու էք մինչև անդամ եթէ պահան-
ջածս անըմբոնելի երենայ ձեզ՝ կատարալ
հնազանդութիւն կպահանջեմ :

— Գուք զիս պառաւէն պիտի աղատէք

— Ոչ միայն զձեզ , այլ նաև ձեր
հարստութիւնը պատասխանեց Հելլիկ :

— Բարի գոչեց ժաք . ահա իմ հա-
ւանութեանս ուխտը :

Երկուքն միատեղ դատաստանարնը
գացին . պառաւը իւր կողմէն երեւլի
փաստաբան մը որոշած էր ատիկայ մեծ
ճարտաստանութեամբ պառաւին իրաւոն-
.քը կը պաշտպանէր , կաէր թէ ամբաս-
տանեալ պարզնը ուզէր է ստակով պա-
ռաւէն աղատիլ , բայց անիկայ այն ա-

ռաջարկութիւնը չնդունիր :

Հելվիկ ելլելով սկսաւ խօսիլ “ պարոններ չեմ գիտեր թէ ի՞նչու համար այս պարոնին դէմ գանգատ ըրած և գատ բացած են քանի որ անիկայ երբէք խորհած անգամ չէ այս պատուարժան տիկնոջ հետ ձանկալի կապակցութիւն մը մերժելու , ընդհակառակը այսպիսի կապակցութիւն մը իւր բաղձանքին առարկան է եղած ” :

Իւրաքանչիւր ոք այս խօսքերը ուշադրութեամբ մոտիկ կնէր և կզարմանար և հարկաւ առաւել քան զամենայն Փաք զարմանալու իրաւունք ունէր :

“ Այս պատճառաւ — յաւելցուց փաստաբանը , կարծեմ երբէք հարկ չկայ զայն բանտարգել , ուստի պարոնին անմիջական արձակումը կիմնդրեմ ” :

“ Բարեկամիս ըսածին համեմատ — պատափանեց պառաւին փաստաբանը եթէ պարոնին բաղձանացն առարկան եծած է , այնպէս կապակցութիւն մը կզահանջեմ որ , վերջը խառնակութեան

առիթ չտալու համար՝ կզահանջեմ որ հիմա հոս քաղական ամուսնութեան միջոցաւ կատարուի ” :

Հելվիկ ընդունեց զայս և չորսն միասին սրահէն մոկնելով դատաւորին առջեւ ներկայացան , որ ամուսնական երդումն ընեն :

Փաք ՚ի սկզբան չուզեց երթալ բայց Հելվիկ անօր ականջն իվար բան մ” ըսելով հետեւեցաւ անոնց քանիմը բուզ պէի մէջ արարողութիւնը կատարուելով պառաւը Փաքին հետ պսակուեցաւ :

— Ինչո՞ւ համար երեկ զիս այնշափ նեղեցիր — ըստապառաւը քաղցրութեամբ մը Փաքին , ճիշտ այսօրվան պէս կրնայինք խաղաղութեամբ տուն երթալ :

— Քիչ մը համբերեցէք տիկին — ըստաւ Հելվիկ — հոս պարոն մը կայ որ ձեղի տեսնել կուզէ :

Այս ըսելով դուռ մը բացաւ ուրկէ ծեր մարդ մը ներս մտնելով պառաւին քով վաղեց :

— Հոս ի՞նչ բան ունիս անպիտան

մարդ , պօռաց պառաւը սուր ձայնով
մը բոլորովին զարհուրած :

— Սիրուն կնիկս , եկույ որ զքեղ
տուն տանիմ , պատասխանեց ծերուկը :

Հերվիկ ալ դատաւորներուն դառնա-
լով “ այո՛ պարսններ , եռեսուն տարի է
իվեր իւր ամուսինը ձգած ըլլալով իւր
պատաւոթեամբը դեռահաս երիտա-
սարդ մ՝ առնելու չամաչեր ” , ըստ ժըպ-
տելով :

Դատաւորները աղատ արձակեցին ըլլ
Ժաք իւր երդումէն . և իրաւունք ալ
տուին զայն դատի հրաւիրելով իւր պա-
տիւը պահանջել , բայց Ժաք որ ուրա-
խութէնէն ինք զինքը պիտի կորսնցներ . քիչ
մնաց , թողէք որ երժայ քանզի իւր դասը
առաւ ըսելով մեկնեցաւ : Եւ վեշապէս
8000 րդ . թիւը Մարեամը շահեցաւ այս
մեծ վիճականութիւնը :

Իսկ Հերվիկ փաստավանն ալ արժանա-
ւոր կերպիւ վարձագրուեցաւ Ժաքէն ,
սրասանց շնորհակալ եմ ձեղ զի ստուգիւ
մեծ դործ մը Ա50,000 դաշերի արժանի

բան մ'ըրիք կսէր անոր :

Մարեամ և Ժաք վերջապէս ամուս-
նութեան սուրբ կապովը միանալով եր-
ջանկութեամբ կապրին այժմ . սիրոյ
քաղցր սիովանքներն վայելելով . սա-
կայն ձաք վիճակահանութեան վրայ
խօսիլ չախորժիր . և շատ բարկայնելու
համար բաւական է 6563 թիւը իրան
միշեցնել :

ԳԻՆ 100 ՓԲ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0342944

